

Բաժիններ

Այն թվերը, որոնցով նշանակվում է մեկը բնական թվի բաժանելու արդյունքը, կոչվում են բաժիններ և գրի են առնվում հետևյալ կերպ.


$$\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{1}{4}, \frac{1}{5}, \frac{1}{6}, \dots$$



Այսինքն՝ բաժինները այն կոտորակներն են, որնց համարիչը 1 է, իսկ հայտարարը բնական թիվ:

Ինչպես են կարդացվում բաժինները՝

Օրինակներ՝ $\frac{1}{2}$ -ը կարդացվում է՝ մեկ երկրորդ

$\frac{1}{3}$ -ը կարդացվում է մեկ երրորդ





Առաջադրանքներ

1. Կարդացեք

ա) $\frac{1}{9}$ -մեկ իններորդ

բ) $\frac{1}{18}$ -մեկ տասնութերորդ

գ) $\frac{1}{2000}$ -մեկ երկուհազարերորդ

2. Գրեք թվանշաններով

ա) Մեկ հինգերորդ $\frac{1}{5}$

բ) Մեկ տասներեքերորդ $\frac{1}{13}$

գ) Մեկ յոթհազարերորդ $\frac{1}{7000}$

դ) Մեկ հինգհազարերորդ $\frac{1}{5000}$

3. Միավորը բաժանված է 8,12,36,400,1001 հավասար մասերի: Ինչպե՞ս է կոչվում հավասար մասերից մեկը այդ դեպքերից յուրաքանչյուրում:

1/8, 1/12, 1/36, 1/400, 1/1001

4. Ուղղանկյան մակերեսի n° բ մասն է գունավորված:



$$\frac{1}{4}$$

--	--	--	--	--

$$\frac{1}{5}$$

5. Տրված թվերից առաջինը երկրորդի n° ր մասն է

ա) Բոսպե և ժամ

$$1/60$$

բ) օր և շաբաթ

$$1/7$$

գ) միլիմետր և սանտիմետր

$$1/10$$

դ) կիլոգրամ և տոննա

$$1/1000$$

ե) միլիմետր և սանտիմետր

$$1/10$$

6. Քանի րոպե է

ա) կես ժամը

$$60:2=30\text{ր}$$

բ)քառորդ ժամը

$$60:4=15\text{ր}$$

գ) $\frac{1}{12}$ ժամը

$$60:12=5\text{ր}$$

դ) $\frac{1}{5}$ ժամը

$$60:5=12\text{ր}$$

7. Անոթում տեղավորվում է 600գ ջուր: Այդ անոթի ո՞ր մասը պետք է լցնել, որպեսզի նրա մեջ լինի 150գ ջուր:

$$600:150=4$$

$$150/600=1/4$$

Պետք է լցնել 600 գրամի $\frac{1}{4}$ -րդ մասը